



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

4 ապրիլի 2025 թվականի թիվ 34-Ա

ք. Երևան

**ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՂՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ մասի և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ և 11-րդ հոդվածների դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հրապարակել

1) տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ եզրակացությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

4 ապրիլի 2025թ.
ք. Երևան

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-ԻՑ ՄԱՐՏԻ 28-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ
ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ
ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1951-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում նշանակվել է ավագանու արտահերթ ընտրություններ, սահմանվել, որ որոշումը ուժի մեջ է մտնում 2025 թվականի փետրվարի 20-ից: Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 20-ի թիվ 2-Ա որոշմամբ ընտրության անցկացման օր է նշանակվել 2025 թվականի մարտի 30-ը:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Ընտրական օրենսգիրք) 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների (այսուհետ նաև՝ Ընտրություններ) նախընտրական քարոզչության ժամանակահատվածն է 15.03.2025թ. – 28.03.2025թ. մինչև ժամը 24:00:

Նախընտրական քարոզչության համար ընտրական օրենսդրությամբ սահմանված տեսալսողական մեդիա ոլորտը կարգավորող բոլոր միջոցառումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) կողմից կատարվել են մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը, ինչն ապահովել է բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ և հնարավորություններ հենց նախընտրական քարոզչության մեկնարկի առաջին իսկ օրվանից:

Այսպիսով, Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 21-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանելու մասին» թիվ 13-Ա որոշումը, որի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վճարովի եթերաժամի մեկ րոպեի

գինը հանրային հեռուստատեսության «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք» տեսալսողական ծրագրի համար սահմանվել է 48000 դրամ (ներառյալ ԱԱՀ), «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրի համար՝ 18000 դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ հանրային ռադիոյի համար սահմանվել է 1700 դրամ (ներառյալ ԱԱՀ):

Հանձնաժողովը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական պայմանների և քաղաքացիների (ընտրողների) համար անկողմնակալ, ստուգված և հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովման նպատակով 2025 թվականի փետրվարի 21-ին ընդունել է նաև «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 12-Ա որոշումը:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները իրենց եթերով հրապարակել են վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, որը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքը, և որը մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել: Նշված տեղեկատվությունը վճարովի եթերաժամ տրամադրող տեսալսողական մեդիաձառայությունների կողմից հրապարակվել է մինչև 2025 թվականի փետրվարի 25-ը:¹

Վճարովի եթերաժամ տրամադրելու վերաբերյալ լիցենզավորված ընկերություններից տեղեկատվություն տարածել են հետևյալ ընկերությունները՝

- Հանրապետական սփռում ունեցող երկու տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «ԿԵՆՏՐՈՆ» և «ՇԱՆԹ» տեսալսողական ծրագրերով.
- Մայրաքաղաքային սփռում ունեցող երեք տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «5-ՐԴ ԱԼԻՔ», «ՖՐԻ ՆՅՈՒՉ» և «21 ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրերով.
- Մարզային սփռում ունեցող մեկ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություն իր կողմից հեռարձակվող «ՅԱՅԳ» տեսալսողական ծրագրով.
- Հանրապետական սփռում ունեցող երկու լսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «ՌԱԴԻՈ ԶԱՆ» և «ՌԱԴԻՈ ՀԱՅ» լսողական ծրագրերով.
- Մարզային սփռում ունեցող երկու լսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություն իրենց կողմից հեռարձակվող «ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» և «ՇԱՆԹ» լսողական ծրագրով:

¹ Նշվածին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://tvradio.am/wp-content/uploads/2025/02/Գյումրի-1-րդալիք.pdf>

Միայն հեղինակագրոված² ընկերություններից վճարովի եթերաժամ տրամադրելու վերաբերյալ տեղեկատվություն տարածել են երեք տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ», «ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» և «ՇԱՆԹ ԳՅՈՒՄՐԻ» տեսալսողական ծրագրերով:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐ

2025 թվականի մարտի 30-ին նշանակված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ընտրությունների համար գրանցվել են հետևյալ կուսակցություններն ու դաշինքները՝

- «Հայաստանի կոմունիստական կուսակցություն».
- «Իմ հզոր համայնք» կուսակցություն.
- «Հայաստանի աշխատավորական սոցիալիստական» կուսակցություն.
- «Ապրելու երկիր» կուսակցություն.
- «Մեր քաղաքը» կուսակցությունների դաշինք, կազմում՝ «Միացյալ Հայաստան» և «Հայրենիք» կուսակցությունները.
- «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցություն.
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն.
- «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինք, կազմում՝ «Ինտելեկտուալ Հայաստան», «Իմ պայքար, իմ հայրենիք» կուսակցությունները.
- «Եվրադաշինք» կուսակցությունների դաշինք, կազմում՝ «Հայաստանի եվրոպական կուսակցություն», «Հանրապետություն», «Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցությունները:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՂՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Տեսալսողական և լսողական հաղորդումներ հեռարձակող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների (այսուհետ նաև՝ տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողներ) կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:

2025 թվականի մարտի 15-ից 28-ը ներառյալ, ինչպես նաև քվեարկության և դրան նախորդող օրը Հանձնաժողովն իրականացրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տեսալսողական մեդիաձառայությունների՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

Հանձնաժողովը տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների հեռարձակված տեսալսողական ծրագրերի ընտրական օրենսդրության համապատասխանության մշտադիտարկումն իրականացնում է՝ հիմք ընդունելով հետևյալը.

² Միայն ցանցային օպերատորի միջոցով հեռարձակողներ:

1. տեսալսողական ծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ուղղակի դիտարկման արդյունքները.

2. տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում մուտքագրված տվյալները.

3. տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը.

4. ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և (կամ) նրանց ներկայացուցիչների կողմից Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը.

5. պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիների կողմից Հանձնաժողով պաշտոնապես ներկայացրած տեղեկատվությունը.

6. Հեռարձակողների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության խախտումների մասին զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:

Հանձնաժողովն ուղղակի դիտարկումն իրականացրել է պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը, Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու հերթական ընտրությունների ժամանակ նաև 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 2 օր առաջ հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում մշտադիտարկման արդյունքները և Հանձնաժողովի եզրակացությունը տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ:

Հանձնաժողովը 2025 թվականի մարտի 24-ին ընդունել է «Տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հրապարակելու մասին» թիվ 24-Ա որոշումը, որը ներառել է 2025 թվականի մարտի 15-ից 20-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները: Նշված տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո 10-րդ օրը՝ 2025 թվականի մարտի 24-ին:

Արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության կարճաժամկետությամբ պայմանավորված՝ տեղեկատվությունը, որը ներառել է 2025 թվականի մարտի 15-ից 28-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը, պետք է

հրապարակվի և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվի ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 2 օր առաջ՝ 2025 թվականի ապրիլի 4-ին:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՅՔ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2025 թվականի մարտի 11-ին ընդունել է «Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ Շիրակի մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի կողմից եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանելու մասին» թիվ 5- Ա որոշումը:³

Վերոնշյալ կարգի համաձայն՝ Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք» և «Առաջինի լրատվական ալիք» ծրագրերից յուրաքանչյուրով տրամադրվում է ոչ ավել, քան 20 րոպե անվճար և ստորև ներկայացված տևողությամբ վճարովի եթերաժամ՝

1) 2025թ. մարտի 15-ից մինչև 2025թ. մարտի 24-ը ներառյալ (10 օր)՝ օրը 1 րոպե անվճար և մինչև 2 րոպե վճարովի հիմունքներով.

2) 2025թ. մարտի 25-ին և 26-ին (2 օր)՝ օրը 2 րոպե անվճար և մինչև 2 րոպե վճարովի հիմունքներով.

3) 2025թ. մարտի 27-ին և 28-ին (2 օր)՝ օրը 3 րոպե անվճար և մինչև 2 րոպե վճարովի հիմունքներով:

Եթերաժամանակի տրամադրման սկիզբ սահմանվել է ժամը 18:00՝ ըստ որոշման հավելվածով սահմանված ժամանակացույցի:

Նույն կարգի համաձայն՝ հանրային ռադիոյի «Առաջին ծրագիր» լսողական ծրագրով 2025թ. մարտի 15-ից մինչև 2025թ. մարտի 28-ը ներառյալ (14 օր) տրամադրվում է օրը 1 րոպե անվճար և մինչև 2 րոպե վճարովի հիմունքներով եթերաժամ:

Եթերաժամանակի տրամադրման սկիզբ սահմանվել է ժամը 13:30՝ ըստ որոշման հավելվածով սահմանված ժամանակացույցի:

Ընտրական օրենսգրքի համաձայն՝ մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը կազմակերպում է առնվազն մեկական բանավեճ, որին մասնակցության հավասար պայմաններ են ապահովվում ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար: Նախընտրական բանավեճի տևողությունը պետք է լինի ոչ պակաս, քան 90 րոպե: Նախընտրական բանավեճի թեման, ձևաչափը և կանոնները որոշում է Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը: Նախընտրական բանավեճը պետք է հեռարձակվի ուղիղ եթերով:

³ Նշվածին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://res.elections.am/images/Decisions/11.03.25/5_A_11-03-2025.pdf

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» և «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագրերի ուղիղ եթերով հեռարձակվել է երկու բանավեճ՝ 2025 թվականի մարտի 23-ին ժամը 21:52-ին 55 րոպե 9 վայրկյան տևողությամբ և մարտի 27-ին ժամը 22:00-ին 126 րոպե 14 վայրկյան: Առաջին նախընտրական բանավեճին թեպետ հրավիրված են եղել բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները, սակայն նախընտրական բանավեճին հրաժարվել են մասնակցել «Ապրելու երկիր», «Հայաստանի կոմունիստական կուսակցություն», «Իմ հզոր համայնք» կուսակցությունները: Երկրորդ նախընտրական բանավեճին պետք է մասնակցեին բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակների առաջին համարները, սակայն նախընտրական բանավեճին հրաժարվել է մասնակցել «Հայաստանի կոմունիստական կուսակցություն»-ը: Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը ապահովել է նախընտրական բանավեճերի մատչելիությունը լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար՝ տեղեկատվությունը ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ մարզկենտրոնների ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ տվյալ մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի եթերաժամից ոչ ավելի, քան 20 րոպե: Այս ընտրությունների դեպքում նշված նորմը վերաբերում է Շիրակի մարզի սփռման սլոթի օգտագործման լիցենզիա ստացած «ՅԱՅԳ» ՍՊ ընկերությանը: Ընձեռած անվճար վերոնշյալ եթերաժամից կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները օգտվել են մասնակի, ինչը փաստում է հավելված 2-ում ներկայացված մշտադիտարկման ցուցանիշների աղյուսակը: Այսպես, «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» չի օգտվել անվճար կարգով տրամադրվող եթերաժամից, իսկ մնացած կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները օգտվել են, սակայն ոչ ամբողջ ծավալով:

Հարկ է նշել, որ այն մեդիածառայություն մատուցող ընկերությունները, որոնք թեև հրապարակել էին իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, սակայն նախընտրական քարոզչության ողջ ժամանակահատվածում վճարովի կարգով տրամադրված եթերաժամ չեն ունեցել, ինչպես նաև չեն լուսաբանել նախընտրական քարոզչությունը լրատվական թողարկումներում կամ այլ հաղորդումներում, չեն ներառվել հավելված 2-ում, դրանք են՝ «ՇԱՆԹ» ՍՊ, «ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունները իրենց կողմից հեռարձակվող համապատասխանաբար «ՇԱՆԹ» և «21 ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրերով և «ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊ ընկերությունը իր կողմից հեռարձակվող «ՌԱԴԻՈ ԶԱՆ» լսողական ծրագրով:

ԷԹԻՎԱՅԻ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

2025 թվականի մարտի 28-ին Հանձնաժողովը դիմել է Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմին «ՖՐԻ ՆՅՈՒՋ» տեսալսողական ծրագրի «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման ժամանակ հնչեցված առանձին արտահայտությունների մասով՝ հաշվի առնելով, որ Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրով, ի թիվս այլնի, սահմանված է, որ

խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են բոլոր կուսակցությունների և թեկնածուների նկատմամբ լինել հանդուրժող, չվիրավորել թեկնածուների անձը, չծաղրել նրանց հայացքներն ու տեսակետները, ինչպես նաև հեռարձակվող լրատվամիջոցները պետք է ձեռնպահ մնան որևէ կոնկրետ թեկնածուին կամ կուսակցությանը աջակցելուց:

2025 թվականի մարտի 31-ին Հանձնաժողովը դիմել է Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմին «ՍԿԻՋԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի մասով՝ հաշվի առնելով, որ Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրով, ի թիվս այլնի, սահմանված է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են չհրապարակել քողարկված քաղաքական գովազդ պարունակող նյութեր: Այս կամ այն կուսակցությանը կամ թեկնածուին աջակցող խմբերի կողմից հրապարակման ներկայացված (վճարովի կամ անվճար) կամ նրանց պատվերով պատրաստված նյութերը հստակ առանձնացնել այլ նյութերից կամ այդ մասին նշում կատարել, ինչպես նաև Հեռարձակվող լրատվամիջոցները պետք է ձեռնպահ մնան որևէ կոնկրետ թեկնածուի կամ կուսակցության աջակցելուց: Նշվածների վերաբերյալ Դիտորդ մարմինն իր եզրակացությունները դեռ չի տրամադրել:

ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ին կայանալիք արտահերթ ընտրությունների հետ կապված Հանձնաժողովը հարուցել է երկու վարչական վարույթ՝ «ՍԿԻՋԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի մասով: Մեկ վարչական վարույթը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասի խախտման հատկանիշներով, այն է՝ կարգավորող պետական մարմնի որոշմամբ կամ նախագահի գրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը: Մյուս վարչական վարույթը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման հատկանիշներով, այն է՝ «Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝ 1) տեսալսողական հաղորդումները հեռարձակվում են ընտրությունների (հանրաքվեների) մասին օրենսդրությանը համապատասխան»:

ԱՄՓՈՓՈՒՄ

Անհրաժեշտ ենք գտնում ևս մեկ անգամ բարձրաձայնել, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված այն դրույթները, որոնց համաձայն սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողները պարտավոր են անվճար եթերաժամ տրամադրել կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին, ոտնահարում է լիցենզավորված տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերությունների իրավունքները: Խնդրահարույց է նաև այն

տեսանկյունից, որ լիցենզավորված տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերությունների վրա օրենսդրությամբ արդեն իսկ դրված են բազմաթիվ պարտավորություններ, այդ թվում՝ պետական տուրքի վճարներ, հեռարձակման վճարներ, մի շարք օրենսդրական պահանջների պահպանման պարտավորություններ, որոնք օրեցօր կրճատվող գովազդային եկամուտների և դիտելիության նվազման պայմաններում էլ ավելի են ազդում տեսալսողական մեդիայի զարգացման և բովանդակության որակի վրա:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ին կայանալիք արտահերթ ընտրությունների ժամանակ Շիրակի մարզում գործող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողը պետք է կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին տրամադրեր 20 րոպե անվճար եթերաժամ: Երևանի ավագանու 2023 թվականի ընտրությունների ժամանակ, մեկ այլ նորմի համաձայն, մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները պետք է 15 րոպե անվճար եթերաժամանակ տրամադրեին կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին: Միաժամանակ նշված խնդիրն ավելի ակնառու է դառնալու Ազգային ժողովի 2026 թվականի ընտրությունների ժամանակ, քանի որ նորմը վերաբերելու է Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող բոլոր տեսալսողական մեդիաձառայություն մատուցողներին և արդեն 25 րոպե տևողությամբ անվճար եթերաժամանակ տրամադրելու պարտավորությամբ:

Այս համատեքստում հարկ է անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ նախընտրական քարոզչությունը զգալիորեն տեղափոխվել է համացանցային տիրույթ՝ նվազեցնելով վճարովի եթերաժամ տրամադրելուց տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների հնարավոր եկամուտները: Միևնույն ժամանակ համացանցում ընտրություններին մասնակից քաղաքական ուժերն անթաքույց կերպով կիրառում են ատելության խոսք, վիրավորանք, տարածում թշնամանք և դրսևորում խտրականություն, այդ թվում՝ քաղաքական հայացքներով պայմանավորված:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ թեպետ Ընտրական օրենսգրքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացրած սոցիալական գովազդների հեռարձակման պահանջը դրված է միայն հանրային հեռարձակողի վրա, սակայն մասնավոր տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները, նպաստելով իրազեկված ընտրություն կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովմանը, իրենց ծրագրերում ևս ներկայացրել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սոցիալական գովազդները:

Հաշվետու ժամանակահատվածում պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, ընտրություններին մասնակցող կուսակցություններից, կուսակցությունների դաշինքներից, զանգվածային լրատվամիջոցներից և քաղաքացիներից դիմում-բողոքներ չեն ստացվել:

Ընտրությունների քվեարկության օրը և դրան նախորդող օրը որևէ ձևով նախընտրական քարոզչության իրականացման արգելքի խախտում չի արձանագրվել:

Սույն եզրակացության Հավելված 2-ում զետեղված աղյուսակում ներկայացված են նախընտրական քարոզչության՝ 2025 թվականի մարտի 15-ից 28-ն ընկած ժամանակահատվածում տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերությունների

կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամի վերաբերյալ տվյալներ՝

- անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը.
- վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը.
- լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը.
- այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը.
- լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ լրատվական թողարկումներից զատ այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը ներառում է ոչ միայն դրական, այլ նաև չեզոք և բացասական անդրադարձերը:

Մշտադիտարկման ցուցանիշներից ակնառու է, որ առկա է առանձին տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամի որոշակի անհամաչափություն: Հանձնաժողովն իրականացրած ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ այդ անհամաչափությունը պայմանավորված է կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից իրենց նախընտրական քարոզչության այս ժամանակահատվածում իրականացված միջոցառումների քանակական բաշխման տարբերություններով, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից անվճար և վճարովի եթերաժամի օգտագործման, տեսալսողական ծրագրերում հյուրընկալվելու պատրաստականությամբ, արտահերթ ընտրություններով պայմանավորված նախընտրական քարոզչության ժամանակահատվածի կարճաժամկետությամբ:

Այսպիսով, ելնելով վերոնշյալից՝ Հանձնաժողովը տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերությունների կողմից 2025 թվականի մարտի 15-ից 28-ն ընկած ժամանակահատվածում տրամադրած և կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից օգտագործված եթերաժամի արձանագրված անհամաչափությունը որպես տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերությունների կողմից նախընտրական քարոզարշավին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ ապահովելու խախտում չի գնահատում:

**ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՁՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ՝ 15.03.2025թ.- 28.03.2025թ.



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	20' 00"	22' 05"	6' 42"	259' 42"	266' 24"
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	16' 30"	0' 00"	2' 54"	28' 55"	31' 49"
3	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	19' 06"	0' 00"	2' 46"	126' 14"	129' 00"
4	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	20' 00"	25' 39"	2' 46"	263' 28"	266' 14"
5	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	2' 45"	260' 22"	263' 07"

6	«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	18' 51"	0' 00"	2' 39"	261' 10"	263' 49"
7	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	13' 30"	11' 40"	2' 22"	256' 57"	259' 19"
8	«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	12' 46"	2' 04"	2' 45"	264' 04"	266' 49"
9	«ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	20' 00"	22' 47"	2' 50"	126' 14"	129' 04"



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ
«ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	20' 00"	6' 56"	13' 01"	221' 52"	234' 53"
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	16' 30"	0' 00"	8' 42"	28' 52"	37' 34"
3	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	19' 06"	0' 00"	8' 05"	125' 13"	133' 18"
4	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	20' 00"	25' 33"	8' 07"	227' 35"	235' 42"
5	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	8' 15"	204' 41"	212' 56"

6	«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	17' 06"	0' 00"	7' 55"	262' 21"	270' 16"
7	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	12' 52"	0' 00"	6' 56"	201' 10"	208' 06"
8	«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	12' 46"	2' 04"	8' 17"	227' 55"	236' 12"
9	«ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	19' 55"	21' 01"	8' 17"	125' 23"	133' 40"



«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ
«ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	17' 12"	4' 15"	21' 27"
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	17' 00"	0' 00"	17' 00"
3	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	9' 54"	0' 00"	9' 54"
4	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	17' 00"	0' 00"	17' 00"
5	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	15' 42"	0' 00"	15' 42"

6	«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	21' 30"	0' 00"	21' 30"
7	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	24' 03"	20' 06"	65' 50"	85' 56"
8	«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	17' 06"	0' 00"	17' 06"
9	«ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	17' 12"	0' 00"	17' 12"



«ՇԱՐԿ» ՍՊԸ

«5-ՐԴ ԱԼԻՔ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	57' 20"	38' 47"	96' 07"
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	77' 41"	81' 51"	159' 32"
3	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	7' 43"	13' 07"	20' 50"
4	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	115' 02"	86' 08"	59' 48"	145' 56"
5	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 16"	13' 07"	13' 23"

6	«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	7' 55"	13' 47"	21' 42"
7	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	9' 21"	13' 53"	23' 14"
8	«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	53' 25"	14' 00"	67' 25"
9	«ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	48' 44"	14' 10"	62' 54"



«ՖՐԻ ՆՅՈՒՉ» ՍՊԸ

«ՖՐԻ ՆՅՈՒՉ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	30' 00"	106' 32"	136' 32"
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	15' 15"	21' 33"	36' 48"
3	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	11' 15"	5' 08"	16' 23"
4	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	15' 30"	17' 53"	33' 23"
5	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱԿՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	10' 00"	4' 33"	14' 33"

6	«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	0' 00"	52' 48"	52' 48"
7	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	8' 00"	3' 44"	11' 44"
8	«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	13' 45"	6' 18"	20' 03"
9	«ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	18' 30"	8' 24"	26' 54"



«ՑԱՅԳ» ՍՊԸ

«ՑԱՅԳ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	14' 35"	123' 23"	12' 28"	19' 09"	31' 37"
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"
3	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	14' 00"	0' 00"	7' 40"	0' 00"	7' 40"
4	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	11' 12"	172' 51"	7' 15"	37' 28"	44' 43"
5	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	13' 20"	0' 00"	7' 30"	0' 00"	7' 30"

6	«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	12' 00"	21' 35"	7' 55"	0' 00"	7' 55"
7	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	6' 46"	62' 30"	7' 36"	0' 00"	7' 36"
8	«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	18' 01"	24' 26"	7' 17"	18' 55"	26' 12"
9	«ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	14' 35"	55' 42"	7' 30"	0' 00"	7' 30"



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ
«ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» լսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	17' 15"	90' 29"	107' 44"
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	13' 31"	10' 21"	23' 52"
3	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	9' 58"	0' 00"	10' 42"	61' 52"	72' 34"
4	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	14' 00"	20' 46"	15' 45"	62' 23"	78' 08"
5	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	11' 07"	65' 06"	76' 13"

6	«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	12' 59"	63' 12"	76' 11"
7	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	12' 39"	64' 01"	76' 40"
8	«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	15' 57"	60' 24"	76' 21"
9	«ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	11' 26"	0' 00"	11' 46"	61' 52"	73' 38"



«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՀԱՅ» լսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	34' 58"	34' 58"
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	17' 22"	17' 22"
3	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	1' 38"	1' 38"
4	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	0' 00"	6' 23"	6' 23"
5	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	1' 39"	1' 39"

6	«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	0' 00"	1' 03"	1' 03"
7	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	3' 34"	3' 34"
8	«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	0' 00"	18' 03"	18' 03"
9	«ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	2' 04"	2' 04"



ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ
«ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» լսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	120' 57"	0' 00"	0' 00"	0' 00"
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"
3	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"
4	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	234' 40"	0' 00"	0' 00"	0' 00"
5	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"

6	«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	20' 00"	0' 00"	0' 00"	0' 00"
7	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"
8	«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	48' 20"	0' 00"	0' 00"	0' 00"
9	«ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	144' 19"	0' 00"	0' 00"	0' 00"



«ՇՀԱՆԹ» ՍՊԸ

«ՇՀԱՆԹ» լսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	103' 40"	1' 24"	0' 00"	1' 24"
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	1' 29"	0' 00"	1' 29"
3	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	3' 50"	0' 00"	3' 50"
4	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	197' 24"	4' 00"	0' 00"	4' 00"
5	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	1' 05"	0' 00"	1' 05"

6	«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	28' 00"	6' 00"	0' 00"	6' 00"
7	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	30' 00"	3' 04"	0' 00"	3' 04"
8	«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	20' 20"	4' 43"	0' 00"	4' 43"
9	«ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	137' 58"	4' 30"	0' 00"	4' 30"



«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊԸ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	7' 00"	4' 12"	11' 12"
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	40' 31"	2' 32"	43' 03"
3	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	4' 40"	0' 00"	4' 40"
4	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	54' 40"	65' 49"	75' 31"	141' 20"
5	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	6' 08"	0' 00"	6' 08"

6	«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"
7	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	33' 38"	55' 51"	89' 29"
8	«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	5' 43"	0' 08"	5' 51"
9	«ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	10' 06"	92' 48"	102' 54"



«ՇԱՆԹ» ՍՊԸ

«ՇԱՆԹ ԳՅՈՒՄՐԻ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	129' 05"	1' 24"	0' 00"	1' 24"
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	87' 30"	1' 29"	0' 00"	1' 29"
3	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	15' 52"	3' 50"	0' 00"	3' 50"
4	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	137' 52"	4' 00"	0' 00"	4' 00"
5	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	22' 16"	1' 05"	0' 00"	1' 05"

6	«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	12' 57"	6' 00"	0' 00"	6' 00"
7	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	135' 30"	3' 04"	0' 00"	3' 04"
8	«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	24' 55"	4' 43"	0' 00"	4' 43"
9	«ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	83' 17"	4' 30"	0' 00"	4' 30"



«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	6' 53"	0' 00"	6' 53"
3	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"
4	«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	55' 19"	5' 55"	0' 00"	5' 55"
5	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"

6	«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"
7	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"
8	«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"
9	«ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"

**ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՂՉՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝ ԸՍՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ**

անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ				
54' 35"	506' 06"	163' 46"	779' 56"	943' 42"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ				
33' 00"	87' 30"	185' 25"	191' 26"	376' 51"
«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ				
62' 10"	15' 52"	70' 25"	333' 12"	403' 37"
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ				
65' 12"	1039' 46"	232' 15"	750' 29"	982' 44"
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ				

13' 20"	22' 16"	63' 53"	549' 28"	613' 21"
«ԵՎՐԱԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ				
47' 57"	82' 32"	72' 53"	654' 21"	727' 14"
«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ				
33' 08"	263' 43"	106' 46"	665' 00"	771' 46"
«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ				
43' 33"	122' 09"	133' 41"	609' 47"	743' 28"
«ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ				
65' 56"	465' 04"	133' 55"	430' 55"	564' 50"